ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Աշխատանքի ծածկագիր 66817

ՈՐՈՇՈՒՄ

ք. Երևան

21.07.2023թ.

Բարձրագույն դատական խորհրդի 13.07.2023 թվականի թիվ ԲԴԽ-71-Ո-221 որոշմամբ կազմավորված դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնի հատուկ կարգով համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության աշխատանքների արդյունքների բողոքարկման հանձնաժողովը *(այսուհետ՝ Հանձնաժողով)*

կազմով՝
Բարձրագույն դատական խորհրդի անդամ **Երանուհի Թումանյանցի,**
Դատական դեպարտամենտի ներկայացուցիչ **Արսեն Հովհաննիսյանի,**
Արդարադատության նախարարության ներկայացուցիչ **Տիգրան Խաչիկյանի,**

քննելով դատավորների թեկնածուների ցուցակի քաղաքացիական մասնագիտացման բաժնի հատուկ կարգով համալրման նպատակով 2023 թվականի հունիսի 28-ին անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված թիվ 66817 ծածկագրով բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

Բողոքաբերի կողմից բողոքարկվել են «Նյութական և դատավարական իրավունքի հարցեր և հակիրճ հիպոթետիկ խնդիրներ» բաժնի 11-րդ, 13-րդ, 20-րդ, 25-րդ, 55-րդ, և 57-րդ հարցերը, ինչպես նաև 2-րդ և 4-րդ խնդիրները:

Հանձնաժողովը Բողոքաբերի կողմից վկայակոչված «Նյութական և դատավարական իրավունքի հարցեր և հակիրճ հիպոթետիկ խնդիրներ» բաժնի 55-րդ թեստային հարցի մասով արձանագրում է, որ ուսումնասիրելով քննարկման առարկա թեստային հարցի ձևակերպումը և բողոքաբերի ներկայացրած հիմնավորումները՝ գտնում է, որ հիշյալ թեստային հարցի վերաբերյալ Բողոքաբերին անհրաժեշտ է շնորհել 1 միավոր:

Ինչ վերաբերում է «Նյութական և դատավարական իրավունքի հարցեր և հակիրճ հիպոթետիկ խնդիրներ» բաժնի 11-րդ, 13-րդ, 20-րդ, 25-րդ և 57-րդ հարցերին, ապա Բողոքաբերի կողմից ընտրված պատասխանի ճշմարտացիության վերաբերյալ հիմնավորումները չեն բխում ՀՀ քաղաքացիական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերով ամրագրված վերաբերելի իրավակարգավորումների տրամաբանությունից, հետևաբար Հանձնաժողովը գտնում է, որ Գնահատման հանձնաժողովի կողմից հիշյալ թեստային հարցի վերաբերյալ Բողոքաբերին նշանակված 0 միավորը ենթակա չէ բարձրացման:

Անդրադառնալով 2-րդ խնդրի վերաբերյալ Բողոքաբերի կողմից ներկայացված հիմնավորումներին՝ Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ 2-րդ խնդրին տրված պատասխանի շրջանակներում Բողոքաբերն անդրադարձել է խնդրի փաստական հանգամանքների նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կիրառելի հոդվածներին, Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումներին և որոշակիորեն մեկնաբանել դրանք, ինչի համադրման արդյունքում կատարել է համապատասխան վերլուծություն, ինչից ելնելով Հանձնաժողովի մոտ պատկեր է ձևավորվել Բողոքաբերի վերլուծական և մեկնաբանման հմտությունների վերաբերյալ: Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ 2-րդ խնդրին տրված պատասխանը ամբողջությամբ համապատասխանում է սահմանված ուղենիշային պատասխանին՝ հանձնաժողովը գտնում է, որ հիշյալ խնդրի վերաբերյալ Բողոքաբերին անհրաժեշտ է շնորհել 1 միավոր: Հարկ է նշել, որ թիվ 66817 ծածկագրով աշխատանքի 2-րդ խնդրի վերաբերյալ գնահատման հանձնաժողովի 2 անդամներ նշանակել են 0 միավոր, այն հիմնավորմամբ, որ աշխատանքի 10-րդ էջում առկա է անհատականացնող նշան, այն է՝ «է» տառը մգեցված է և երկու անգամ կրկնված, իսկ գնահատող հանձնաժողովի մյուս անդամի կողմից խնդրի վերաբերյալ նշանակվել է 34 միավոր: Հարկ է նշել, որ Հանձնաժողովը հիմք ընդունելով Բարձրագույն դատական խորհրդի 2023 թվականի փետրվարի 2-ի թիվ ԲԴԽ-15-Ո-55 որոշման (այսուհետ՝ Որոշում) վերաբերելի դրույթների, բողոքաբերի գրավոր աշխատանքի, ինչպես նաև վերջինիս կողմից ներկայացված բողոքում առկա հիմնավորումների բազմակողմանի ուսումնասիրությունը՝ գտնում է, որ Բողոքաբերի գրավոր աշխատանքում բացակայում է Որոշման Հավելված 3-ի 33-րդ կետով սահմանված դեպքը և անհրաժեշտ է հաշվի առնել 2-րդ խնդրի վերաբերյալ գնահատող հանձնաժողովի անդամի կողմից նշանակված 34 միավորը:

4-րդ խնդրի շրջանակներում Բողոքաբերը բովանդակային իմաստով անդրադարձել է ինչպես դատական նիստից դուրս հայցապահանջներից հրաժարվելու մասին ներկայացված միջնորդության դեպքում այն 10-օրյա ժամկետում քննելու դատարանի պարտավորությանը, այնպես էլ ներկայացրել է պահանջներից հրաժարվելու դատավարական հետևանքները: Ընդ որում, Բողոքաբերն իրավացիորեն անդրադարձել է նաև այն հանգամանքին, որ պահանջից հրաժարվելը հայցվորի տնօրինչական գործողությունն է, ինչպես նաև Բողոքաբերը նշել է հայցից հրաժարվելու մասին միջնորդություն ներկայացնելու դեպքում դատարանի կողմից իրականացվելիք

դատավարական գործողությունների հաջորդականությունը: Հաշվի առնելով վերոգրյալը, բողոքում նշված այլ հանգամանքները, ինչպես նաև Բողոքաբերի վերլուծական և մեկնաբանման հմտությունները և կատարված վերլուծությունից բխող եզրակացությունը՝ Հանձնաժողովը դիտարկում է բավարար նշված խնդրի կապակցությամբ Բողոքաբերին ևս 2 միավոր շնորհելու համար:

Վերոգրյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը, բողոքը քննելով ներկայացված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, արձանագրում է, որ այն հիմնավոր է մասնակի, ուստի «Նյութական և դատավարական իրավունքի հարցեր և հակիրճ հիպոթետիկ խնդիրներ» բաժնի 55-րդ հարցից ստացած 0 միավորը պետք է փոփոխել և դարձնել 1 միավոր, իսկ 11-րդ, 13-րդ, 20-րդ, 25-րդ և 57-րդ հարցերից ստացած 0-ական միավորները թողնել անփոփոխ, ինչպես նաև 2-րդ խնդրի վերաբերյալ անհրաժեշտ է հաշվի առնել նշանակված 34 միավորը, բացի դրանից 2-րդ և 4-րդ խնդիրների մասով Բողոքաբերին անհրաժեշտ է լրացուցիչ շնորհել համապատասխանաբար 1 և 2 միավորներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Բարձրագույն դատական խորհրդի 02.02.2023 թվականի թիվ ԲԴԽ-15-Ո-55 որոշման 4-րդ հավելվածի 4-րդ բաժնի 9-րդ կետով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

Թիվ 66817 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի, «Նյութական և դատավարական իրավունքի հարցեր և հակիրճ հիպոթետիկ խնդիրներ» բաժնի 55-րդ հարցից ստացած 0 միավորը փոփոխել և շնորհել 1 միավոր, իսկ 11-րդ, 13-րդ, 20-րդ, 25-րդ և 57-րդ հարցերից ստացած 0-ական միավորները թողնել անփոփոխ, հաշվի առնել 2-րդ խնդրի վերաբերյալ նշանակված 34 միավորը, բացի դրանից 2-րդ և 4-րդ խնդիրների մասով լրացուցիչ շնորհել համապատասխանաբար 1 և 2 միավորներ. արձանագրել, որ թեստային բոլոր առաջադրանքների ընդհանուր հանրագումարային միավորը 44 միավոր է, իսկ խնդիրներինը՝ 37 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ